ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 257 Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹԱՆԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՐԳԻՇՏԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 112-հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Արգիշտի Նազարյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գողթանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Արգիշտի Նազարյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2026 թվականի մարտի 25-ի N Մ-13-2026 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքի վերջին օրը համարել 2026 թվականի հոկտեմբերի 21-ը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2026-10-20 11:48:53 GMT+4

/Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվական հոկտեմբերի 20
ք.Եղեգնաձոր